



«ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ
Խորհրդի 04.12.2020 թվականի թիվ 76 որոշմամբ

Ուժի մեջ է 10.12.2020թ. -ից

ԱՐՏԵՐԿԻՐ ՄԵԿՆՈՂՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Փաստաթղթի կոդ՝ Պ750-02-04
Խմբագրություն՝ 04
Ակտիվի դաս՝ Հրապարակային



ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Արտերկիր մեկնողների աջակցության ապահովագրության պայմանները (այսուհետ՝ Պայմաններ) մշակված են համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք), այլ իրավական ակտերի (միասին այսուհետ՝ ՀՀ օրենսդրություն):
- 1.2. «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրված թիվ 0006 (0009) լիցենզիայի հիման վրա իրականացնում է «Աջակցության ապահովագրություն» դասի ապահովագրություն՝ սույն Պայմանների հիման վրա կնքելով Արտերկիր մեկնողների աջակցության ապահովագրության պայմանագիր կամ վկայագիր:

ԲԱԺԻՆ 2. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 2.1. **Ապահովագրող՝ «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ:**
- 2.2. **Ապահովադիր՝** Ապահովագրողի հետ ապահովագրության պայմանագիր կամ վկայագիր կնքած անձ:
- 2.3. **Պայմանագիր՝** սույն Պայմանների հիման վրա կնքված ապահովագրության պայմանագիր կամ վկայագիր:
- 2.4. **Ապահովագրված անձ՝** Ապահովադրի կողմից Պայմանագրում նշված անձ, ում հետ կապված ապահովագրական պատահարի առաջացումը հանդիսանում է Պայմանագրի առարկա: Ապահովագրված անձը հանդիսանում է շահառու, ով իրավունք ունի ստանալ ապահովագրական հատուցում:
- 2.5. **Ապահովագրական գումար՝** Ապահովագրողի կողմից վճարման ենթակա հնարավոր ապահովագրական հատուցման առավելագույն չափ:
- 2.6. **Ապահովագրական սակագին՝** Ապահովագրական գումարի նկատմամբ ապահովագրավճարի դրույքաչափ՝ տոկոսային արտահայտությամբ:
- 2.7. **Ապահովագրավճար՝** Պայմանագրով սահմանված չափով Ապահովադրի կողմից Ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման դիմաց վճարվելիք գումար:
- 2.8. **Չհատուցվող գումար (ֆրանշիզա)՝** Ապահովադրի մասնակցության չափը վնասի հատուցմանը, որը սահմանվում է Պայմանագրով կոնկրետ գումարի կամ Ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսի տեսքով: Պայմանագրով կարող է սահմանվել պայմանական կամ ոչ պայմանական չհատուցվող գումար:
 - 2.8.1. Պայմանագրում պայմանական չհատուցվող գումար սահմանված լինելու դեպքում Ապահովագրողն ազատվում է փաստացի վնասների կամ կորուստների հատուցման պարտականությունից, եթե այդ վնասի չափը չի գերազանցում Պայմանագրով սահմանված չհատուցվող գումարի չափը, և պարտավոր է վճարել Ապահովագրական հատուցումն ամբողջությամբ, եթե դրա մեծությունը գերազանցում է չհատուցվող գումարի չափը:
 - 2.8.2. Պայմանագրում ոչ պայմանական չհատուցվող գումար սահմանված լինելու դեպքում Ապահովագրողն ազատվում է Պայմանագրով սահմանված ոչ պայմանական չհատուցվող գումարի մասով հատուցում իրականացնելուց՝ անկախ վնասի և կորստի չափից:
- 2.9. **Ապահովագրության տարածք՝** Պայմանագրում նշված տարածք, որտեղ տեղի ունեցած դեպքը կարող է դիտարկվել որպես ապահովագրական պատահար:
- 2.10. **Ապահովագրական պատահար՝** Ապահովագրված անձի հանկարծակի հիվանդությունը, նրա հետ տեղի ունեցած դժբախտ պատահարը, ինչպես նաև դրանց հետևանքով առաջացած մահը, որոնք տեղի են ունեցել Ապահովագրության տարածքում՝ Պայմանագրի գործողության ընթացքում, և որի ի հայտ գալու դեպքում Ապահովագրողը պարտավորվում է իրականացնել ապահովագրական հատուցում:
- 2.11. **Հանկարծակի հիվանդություն՝** հիվանդություն, որն ի հայտ է եկել հանկարծակիորեն Պայմանագրի գործողության ընթացքում և պահանջում է անհապաղ բժշկական միջամտություն:
- 2.12. **Դժբախտ պատահար՝** Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովագրված անձի կամքից անկախ տեղի ունեցած հանկարծակի, պատահական, անսպասելի, կարճաժամկետ, արտաքին ազդեցություն ունեցող իրադարձություն (դեպք), որի հետևանքով առաջանում է Ապահովագրված անձի մարմնական



վնասվածք, սուր թունավորում, աշխատունակության ժամանակավոր և (կամ) մշտական կորուստ և (կամ) մահ:

2.13. **Աջակցող ընկերություն՝** Ընկերության հետ համագործակցության պայմանագիր կնքած կազմակերպություն, որն Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովագրված անձի համար կազմակերպում է համապատասխան ծառայությունների մատուցում:

ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

- 3.1. Ապահովագրության օբյեկտն Ապահովագրված անձի գույքային շահերն են՝ կապված Ապահովագրության տարածքում Ապահովագրական պատահարի տեղի ունենալու հետ:
- 3.2. Սույն Պայմանների համաձայն կարող է ապահովագրվել Պայմանագրի կնքման պահին մինչև 85 (ութսունհինգ) տարեկան (ներառյալ) ֆիզիկական անձը:

ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ ԵՎ ՌԻՍԿԵՐ

- 4.1. Համաձայն սույն Պայմանների՝ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂ ՀՍՏՈՒՑՈՒՄ է հետևյալ ծախսերը.
 - 4.1.1. *անհետաձգելի (շտապ) բժշկական ծառայության ծախսերը, որոնք ցուցված են բժշկի կողմից և ներառում են.*
 - 4.1.1.1. շտապ և անհետաձգելի բժշկական օգնության ծախսերը,
 - 4.1.1.2. հիվանդանոցային բուժման ծախսերը (ներառյալ՝ Ապահովագրված անձին բուժող բժշկի կողմից նշանակված/կատարված ախտորոշիչ հետազոտությունների, միջամտությունների, շտապ վիրահատությունների և նշանակված դեղորայքի, վիրակապական և ֆիքսող պարագաների (գիպս, բանդաժ և այլն), ստանդարտ տիպի հիվանդասենյակի ծախսերը),
 - 4.1.1.3. արտահիվանդանոցային բուժման ծախսերը (ներառյալ՝ Ապահովագրված անձին բուժող բժշկի կողմից նշանակված/կատարված ախտորոշիչ հետազոտությունների, նշանակված դեղորայքի, վիրակապական և ֆիքսող պարագաների (գիպս, բանդաժ և այլն), ծախսեր),
 - 4.1.1.4. ատամնացավ, ինչը պահանջում է շտապ բժշկական միջամտություն սույն Պայմաններով նշված սահմանաչափի շրջանակներում,
 - 4.1.1.5. Ապահովագրված անձին բուժող բժշկի կողմից ցուցված դեղամիջոցների և բժշկական պարագաների տրամադրման համար ծախսերը,
 - 4.1.1.6. բժիշկ-մասնագետի հրավիրման հետ կապված ծախսերը, որոնք հատուցվում են այն դեպքում, երբ տվյալ տարածքում բուժումն անհնար է, և մինևույն ժամանակ անհնար է կամ բժշկի կողմից հակացուցվում է Ապահովագրված անձի տեղափոխումն այլ տարածք,
 - 4.1.1.7. բուժման հսկողության կազմակերպման ծախսերը, որոնք իրականացվում են այն ժամանակ, երբ անհրաժեշտություն է առաջանում իրականացնել խնամք հոսպիտալացված Ապահովագրված անձի նկատմամբ, ում հետ Ապահովագրության տարածքում բացակայում է նման գործողություններ իրականացնող անձը: Ապահովագրված անձի առողջական վիճակի մասին նաև տեղեկացվում է Ապահովագրված անձի ընտանիքի անդամներին կամ հարազատներին:
 - 4.1.2. *Ապահովագրական պատահարի ժամանակ առաջացած բուժօրհանսպորտային ծառայությունների ծախսերը, որոնք ներառում են.*
 - 4.1.2.1. Ապահովագրված անձին Ապահովագրական պատահարի վայրից շտապ (անհետաձգելի) բժշկական օգնություն տրամադրելու համար տրանսպորտային միջոցով (բացառությամբ օդային) մոտակա բժշկական հաստատություն տեղափոխելու ծախսը,
 - 4.1.2.2. Ապահովագրված անձին բուժող բժշկի ցուցմամբ տրանսպորտային միջոցով (բացառությամբ օդային) այլ բժշկական հաստատություն տեղափոխելու ծախսը,
 - 4.1.2.3. Ապահովագրված անձին բուժող բժշկի ցուցմամբ Ապահովագրված անձի հայրենադարձման ծախսերը, որոնք ներառում են վերջինիս՝ դեպի իր բնակության վայր հետադարձ ավիատոմսի ամսաթվի փոփոխման ծախսը՝ ավիատոմսի առկայության դեպքում, հակառակ դեպքում՝ նոր էկոնոմ դասի ավիատոմսի արժեքը:
 - 4.1.3. *Դժբախտ պատահարի և Հանկարծակի հիվանդության հետևանքով կատարված հետևյալ ծախսերը.*



- 4.1.3.1. ՀՀ-ից կամ ԼՂՀ-ից Ապահովագրված անձի հարազատներից որևէ մեկի՝ էկոնոմ դասի երկկողմանի ավիատոմսի ծախսը դեպի Ապահովագրության տարածք, եթե Ապահովագրված անձը գտնվում է այնպիսի վիճակում, որի դեպքում, համաձայն բժշկի ցուցման, ունի խնամողի կարիք և վերջինիս հետ չկա նման գործողություններն իրականացնող անձ,
- 4.1.3.2. Ապահովագրված անձի խնամքի տակ և Ապահովագրության տարածքում գտնվող մինչև 18 տարեկան երեխաների վերադարձը նրանց մշտական բնակության վայր՝ ապահովելով էկոնոմ դասի ավիատոմսեր, կամ արդեն իսկ առկա ավիատոմսերի ամսաթվի փոփոխման հետ կապված ծախսը՝ անհրաժեշտության դեպքում ապահովելով ուղեկցող մինչև մոտակա օդանավակայան: Սա իրականացվում է այն դեպքում, երբ Ապահովագրված անձը գտնվում է այնպիսի առողջական վիճակում, որը թույլ չի տալիս իր հետ և իր խնամքի տակ գտնվող երեխաների նկատմամբ իրականացնել խնամք կամ եթե Ապահովագրված անձը մահացել է, և երեխաները տվյալ երկրում մնացել են առանց խնամողի,
- 4.1.3.3. Ապահովագրական պատահարի հետևանքով Ապահովագրված անձի մահվան դեպքում վերջինիս աճյունի վերադարձը նրա մշտական բնակության վայր՝ իրականացնելով ապահովագրական հատուցում Ապահովագրական գումարի մինչև 30 (երեսուն) %-ի չափով,
- 4.1.3.4. Պայմանների 4.1.3.3 ենթակետով սահմանված դեպքում մշտական բնակության վայրից տարբերվող այլ վայր տեղափոխելու դեպքում ապահովագրական հատուցում է կատարվում այն գումարի չափով, որը կվճարվեր, եթե աճյունը տեղափոխեին մշտական բնակության վայր, բայց ոչ ավել, քան Ապահովագրական գումարի 30 (երեսուն) %-ը,
- 4.1.4. *Ծախսեր, որոնք Ապահովադիրն (Ապահովագրված անձն) իրականացրել է Ապահովագրական պատահարի մասին Աջակցող ընկերությանը կամ Ապահովագրողին տեղեկացնելիս: Այս դեպքում Ապահովագրողին պետք է ներկայացվեն համապատասխան ծախսերը հավաստող փաստաթղթեր,*
- 4.1.5. *Ապահովագրողը կամ Աջակցող ընկերությունը միջնորդում է, որպեսզի Ապահովագրված անձը կարողանա ստանալ իրավաբանի խորհրդատվություն, եթե նման անհրաժեշտությունն առաջացել է Ապահովագրական պատահարի հետևանքով, որի համար վճարները կատարվում են Ապահովագրված անձի միջոցներով:*
- 4.2. Ապահովագրողն իրականացնում է ապահովագրական հատուցում նաև այն դեպքում, երբ Դժբախտ պատահարի հետևանքներն ի հայտ են եկել դրա տեղի ունենալուց հետո 30 (երեսուն) օրվա ընթացքում՝ անկախ Պայմանագրի գործողության ավարտված լինելու փաստից:
- 4.3. Սույն Պայմաններով ապահովագրական հատուցումը վճարվում է Ապահովագրված անձին, եթե նա, հետևելով սույն Պայմանների պահանջներին, ինքնուրույն է իրականացրել ծախսերը, կամ Աջակցող ընկերությանը, եթե Ապահովագրված անձը դիմել է իրենց:

ԲԱԺԻՆ 5. ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 5.1. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՉԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ հետևյալ ծախսերի համար.
 - 5.1.1. *Ապահովագրված անձի կողմից վտանգի կանխամտածված ենթարկման (բացառությամբ՝ մարդկային կյանք փրկելու փորձերը), իրեն հակացուցված և (կամ) անօրինական գործողությունների և գործունեության իրականացման, ինչպես նաև Ապահովագրված անձի ինքնասպանության փորձի, ինքնավնասման հետևանքով առաջացած ծախսերը (բացառությամբ այն դեպքերի, երբ Ապահովագրված անձը վերոհիշյալ գործողությունը կատարել է երրորդ անձանց պարտադրանքով),*
 - 5.1.2. *տարբեր տեսակի փորձարկումների, մրցումների, մրցույթների, պարապմունքների, վտանգավոր աշխատանքների, վտանգավոր սպորտով, հոբբիով կամ զվարճանքերով զբաղվելու (լեռնագնացություն, սուզում, օդապարիկով թռիչք, վինդսերֆինգ, դայվինգ, պարաշյուտիզմ, սավառնարվեստ, սքեյթբորդինգ, սնոուբորդինգ, մաունթինբայկ, հոլովակասպորտ, ժայռամազցում, սպելեոլոգիա, սպորտային տուրիզմ, ձմեռային լող, բեյսջամֆինգ և այլն) ժամանակ ստացած վնասվածքների ծախսերը, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ,*
 - 5.1.3. *քաղաքացիական հուզումների, պատերազմների, զորաշարժերի կամ ռազմական այլ գործողությունների, սահաբեկչական գործողությունների, զանգվածային ակցիաների, գործադուլների ուղղակի կամ անուղղակի մասնակցության հետևանքով առաջացած ծախսերը,*



- 5.1.4. միջուկային պայթյունի, ճառագայթման, ռադիոակտիվ վարակի, քիմիական կամ կենսաբանական զենքի ազդեցության հետևանքով առաջացած ծախսերը,
- 5.1.5. տարերային աղետների հետևանքով առաջացած ծախսերը,
- 5.1.6. Հայաստանի Հանրապետություն, Արցախի Հանրապետություն կամ այն տարածքներ, որտեղ Ապահովագրված անձը հանդիսանում է քաղաքացի կամ ռեզիդենտ, վերադառնալուց հետո կատարված ծախսերը:
- 5.2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂ ԿԱՐՈՂ Է ՀԱՏՈՒՑՈՒՄ ԶԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ հետևյալ ծախսերի համար.
 - 5.2.1. առողջական խանգարումները չբուժելու, բժշկի ցուցումներին չհետևելու, բուժող բժշկի չնշանակած կամ նշանակածից ավել դեղորայք ընդունելու, ինչպես նաև առաջացած վնասվածքների բուժումից հրաժարվելու կամ բուժումն ուշացնելու պատճառով առաջացած վնասվածքների բարդացման և (կամ) դրա հետևանքով նոր վնասվածքների առաջացման հետ կապված ծախսերը,
 - 5.2.2. վերին շնչառական համակարգի, մաշկի և լորձաթաղանթների, արյան, ստամոքս-աղիքային համակարգի, միզասեռական համակարգի բոլոր տեսակի վարակների խորհրդատվության, ախտորոշման և բուժման, ինչպես նաև վարակային այնպիսի հիվանդությունների վերաբերյալ խորհրդատվության, հետազոտման և բուժման ծախսերը, որոնք փոխանցվում են առավելագույն սեռական ճանապարհով՝ գոնորեա, սիֆիլիս, խլամիդիոզ, միկոպլազմոզ, տրիխոմոնիազ, ցիտոմեգալովիրուս, ուրեոպլազմոզ, գարդներելիոզ, անալ և զենիտալ հերպես և այլն,
 - 5.2.3. ոչ ավանդական բժշկական բուժման ծախսերը,
 - 5.2.4. առանց բժշկի ցուցումների իրականացված ընդհանուր բուժզննումների և խորհրդատվությունների հետ կապված ծախսերը,
 - 5.2.5. պրոթեզի և (կամ) պրոթեզավորման, էնդոպրոթեզի և (կամ) էնդոպրոթեզավորման, օրթոպեդիկ կոշիկների, բարձերի, արհեստական ռսպնյակների, սայլակների, լսողական սարքերի, ակնոցների, այդ թվում՝ կոնտակտային լինզաների հետ կապված ծախսերը,
 - 5.2.6. կենսաակտիվ հավելումների, վիտամինոմոնոթերապիայի, կոսմետիկ և հիգիենայի պարագաների հետ կապված ծախսերը,
 - 5.2.7. ժառանգական և զենետիկ նախատրամադրվածություն ունեցող հիվանդությունների՝ պարբերական հիվանդության, էպիլեպսիայի և այլնի, բնածին արատների, անատոմիական զարգացման առանձնահատկությունների (դրանց բարդությունների), ողնաշարի միջոդնային սկավառակների ախտահարումների, կեցվածքի խախտումների, դեզենտրատիվ դիստրոֆիկ փոփոխությունների (օրինակ՝ օստեոխոնդրոզ) հետ կապված ծախսերը,
 - 5.2.8. բացիլակրության, վիրուսակրության, ճիճվակրության, տուբերկուլյոզի, միկոզների հետ կապված ծախսերը,
 - 5.2.9. աուտոիմուն հիվանդությունների, շարակցական հյուսվածքի համակարգային հիվանդությունների (համակարգային կարմիր գայլախտ, ռևմատոիդ արթրիտ, դերմատոմիոզիտ և այլն), համակարգային վասկուլիտների (հանգուցավոր պերիարտերիտ, հեմոռագիկ վասկուլիտ և այլն), քրոնիկական արթրոզների, պտրիազի, էկզեմայի հետ կապված ծախսերը,
 - 5.2.10. քրոնիկական երիկամային անբավարարության հետ կապված ծախսերը,
 - 5.2.11. նյարդային համակարգի դեմիելինիզացնող հիվանդությունների հետ կապված ծախսերը,
 - 5.2.12. արտահայտված էնդոկրինոպաթիաների, շաքարային դիաբետի և դրա բարդությունների հետ կապված ծախսերը,
 - 5.2.13. սլանային հետազոտությունների հետ կապված ծախսերը,
 - 5.2.14. սլաստիկ և վերականգնողական վիրաբուժական և (կամ) կոնսերվատիվ բուժման, պրոթեզավորման, քթի միջնապատի դեֆորմացիաների շտկման և բարդությունների վիրահատական բուժման (բացառությամբ այն դեպքերի, եթե դրանց իրականացման անհրաժեշտությունը առաջացել է Ապահովագրական պատահարի արդյունքում և բուժումը կատարվում է վնասված օրգանի ֆունկցիոնալ վերականգնման նպատակով) հետ կապված ծախսերը,



- 5.2.15. կոսմետիկ և հոգեբանական վիճակը բարելավելու նպատակով կատարված հետազոտման, դրանց բուժման կամ միջամտությունների ծախսերը (այդ թվում՝ պայպիլոմաների, պոլիպների, գորտնուկների խալերի և այլ էլեմենտների հետազոտում),
- 5.2.16. տեսողության՝ դեղորայքային և վիրաբուժական (էքսիմեր) շտկման, քաշի՝ դեղորայքային և վիրաբուժական շտկման հետ կապված ծախսերը,
- 5.2.17. վերարտադրողական ֆունկցիայի խանգարման, և դրա հետ կապված հետազոտման և (կամ) բուժման (օրինակ՝ սեռական հորմոնալ դիսֆունկցիա, դիսմենորեա, դրանց ախտորոշում և բուժում), հակաբեղմնավորիչ միջոցների, ֆիզիոթերապիայի և (կամ) վերականգնողական բուժման հետ կապված ծախսերը,
- 5.2.18. ալկոհոլամոլության, թմրամոլության և թունամոլության, ինչպես նաև Ապահովագրված անձի կողմից ալկոհոլի և (կամ) թմրադեղերի և (կամ) հոգեմետ և այլ տոքսիկ նյութերի և (կամ) թունաքիմիկատների օգտագործման հետ կապված ծախսերը,
- 5.2.19. հանգստավայրերում, առողջարանային համալիրներում, հանգստյան տներում և պանսիոնատներում իրականացված ծախսերը,
- 5.2.20. հղիության կամ ծննդաբերության հետ կապված ծախսերը (բացառությամբ Ապահովագրված անձի կյանքի փրկման հետ կապված բժշկական օգնության),
- 5.2.21. հեպատիտների կամ ձեռքբերովի իմունային անվաբարարության համախտանիշի (ՁԲԱՀ), ՁԲԱՀ-ի Համակցված Համալիրի (ՁՀՀ) կամ մարդու իմունային անբավարարության վիրուսի (ՄԻԱՎ),
- 5.2.22. քաղցկեղի հետ կապված ցանկացած ծախսը,
- 5.2.23. քրոնիկ և տարիքային հիվանդությունների և դրանց հետևանքների հետ կապված ծախսերը, որոնք պահանջում են մշտական և (կամ) պահպանողական բուժում և դինամիկ հսկողություն,
- 5.2.24. մինչև Պայմանագիրը կնքելն Ապահովագրված անձի մոտ առկա հիվանդության, առողջական վիճակների և խանգարումների հետևանքով առաջացած դեպքերի,
- 5.2.25. ատամնաբուժական ծառայությունների ծախսեր, բացառությամբ ատամի և ատամը շրջապատող հյուսվածքի սուր բորբոքման հետևանքով իրականացված զննումը, շտապ բուժումը և դեղորայքի ծախսերը, ինչպես նաև Դժբախտ պատահարի հետևանքով ատամի վնասվածքը,
- 5.2.26. սրտամկանի և սրտամկանը սնուցող անոթների ինվազիվ միջամտության և վիրահատության հետ կապված ծախսերը,
- 5.2.27. տարափոխիկ հիվանդությունների, կենտրոնական նյարդային համակարգի ֆունկցիոնալ խանգարումների և հոգեկան հիվանդությունների և շեղումների, ներքոզնների (ասթենո-ներտոսիկ համախտանիշ, վեգետո-անոթային դիստոնիա և այլն) կանխման և բուժման ծախսերը, հոգեթերապևտիկ ծառայությունների հետ կապված ծախսերը,
- 5.2.28. հիվանդանոցային և արտահիվանդանոցային ձևով իրականացվող այն հետազոտությունները (այդ թվում նաև խորհրդատվությունը և լաբորատոր հետազոտությունները), որոնց չի հաջորդում տվյալ հիվանդության հիվանդանոցային բուժումը,
- 5.2.29. արևային այրվածքների և ուլտրամանուշակագույն ճառագայթների հետևանքով առաջացած առողջական խանգարումները,
- 5.2.30. ախտորոշման և բուժման համար պարտադիր չհանդիսացող ծախսերը,
- 5.2.31. լրացուցիչ հարմարությունների հետ կապված ծախսերը, այդ թվում՝ հիվանդասենյակում հեռուստացույցի, օդորակիչի, հեռախոսի առկայություն, թարգմանչի, մերսման, վարսավիրի ծառայություններ և այլն,
- 5.2.32. ծախսեր, որոնք իրականացվել են չլիցենզավորված բժշկական հաստատության կամ բժշկի ծառայություններից օգտվելու ժամանակ կամ նրանց կարգադրությամբ կամ խորհրդով,
- 5.2.33. վնասները կանխելու միջոցառումներ չիրականացնելու հետևանքով առաջացած նոր վնասները՝ բացառությամբ, եթե դա հնարավոր չի եղել իրականացնել:
- 5.3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀՍՏՈՒՑՈՒՄ ՉԻ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ նաև այն դեպքում, երբ՝
- 5.3.1. Պայմանագիրը կնքելու պահին Ապահովադիրն Ապահովագրողին հայտնել է ապահովագրական ռիսկի վրա ազդող կեղծ տեղեկություններ կամ եթե տեղի է ունեցել ռիսկի մեծացում Պայմանագրի գործողության ընթացքում և այդ մասին չի տեղեկացվել Ապահովագրողին,



- 5.3.2. Ապահովագրված անձը չի պահպանել վարակիչ հիվանդությունների պրոֆիլակտիկայի միջազգային բժշկական պահանջները, ինչը և պատճառ է հանդիսացել Ապահովագրական պատահարի տեղի ունենալուն,
- 5.3.3. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու ժամանակ Ապահովագրված անձը գտնվել է որևէ օդային փոխադրամիջոցում՝ որպես օդաչու,
- 5.3.4. Ապահովագրված անձի խնամողների՝ բարեկամների, հարազատների համար կատարված ծախսերը,
- 5.3.5. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու ժամանակ Ապահովագրված անձը հանդիսացել է ավտոտրանսպորտային միջոցի վարորդ և չի ունեցել տվյալ տեսակի ավտոտրանսպորտային միջոցը վարելու իրավունք,
- 5.3.6. Ապահովագրական պատահարը տեղի ունենալու ժամանակ Ապահովագրված անձը հանդիսացել է ավտոտրանսպորտային միջոցի ուղևոր, որի վարորդը այդ պահին եղել է ռզեչից խմիչքի, թմրադեղի, տոքսիկ կամ այլ հոգեմեկտ նյութի ազդեցության ներքո (եթե Ապահովագրված անձը տեղյակ է եղել այդ մասին),
- 5.3.7. Ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած վնասի չափը գերազանցել է Ապահովագրական գումարը (գերազանցող մասով):

ԲԱԺԻՆ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԸ

- 6.1. Ապահովագրական գումարն Ապահովագրողի և Ապահովադրի (այսուհետ՝ Կողմեր) ընդհանուր համաձայնությամբ Պայմանագրով սահմանված գումարն է:
- 6.2. Ատամնաբուժություն ծածկույթի համար Ապահովագրական գումարը սահմանվում է 200 (երկու հարյուր) եվրոյին համարժեք ՀՀ դրամ Պայմանագրի գործողության ողջ ընթացքի համար, որը հաշվարկվում է Ապահովագրական պատահարի տեղի ունենալու օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքով:
- 6.3. Սույն Պայմանների շրջանակներում, առանց Ապահովագրողի կամ Աջակցող ընկերության կարգադրության, Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից ինքնուրույն (իր համար) կատարված ծախսերը հատուցվում են առավելագույնը 150 (մեկ հարյուր հիսուն) եվրոյին համարժեք ՀՀ դրամի սահմաններում, որը հաշվարկվում է Ապահովագրական պատահարի տեղի ունենալու օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքով՝ բացառությամբ սույն Պայմանների 6.8 կետում նշված դեպքերի
- 6.4. Կյանքին վտանգ սպառնացող քրոնիկ հիվանդությունների սրացումների հետ կապված ծախսերը հատուցվում են առավելագույնը 1000 (մեկ հազար) եվրոյին համարժեք ՀՀ դրամի սահմաններում, որը հաշվարկվում է Ապահովագրական պատահարի տեղի ունենալու օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքով:
- 6.5. Ապահովագրական գումարն ինքնաշխատ կերպով նվազում է իրականացված ապահովագրական հատուցման չափով:
- 6.6. Ապահովադիրը կարող է հանդես գալ Ապահովագրական գումարը մեծացնելու պահանջով՝ վճարելով համապատասխան չափով Ապահովագրավճար:
- 6.7. Պայմանագրով կարող է սահմանվել յուրաքանչյուր ապահովագրական հատուցման իրականացման կամ առանձին տեսակի վնասվածքների համար իրականացվող ապահովագրական հատուցման առավելագույն սահմանաչափ յուրաքանչյուր պատահարի համար:
- 6.8. ԱՄՆ և Կանադա ապահովագրական տարածքներում ապահովագրական պատահարի դեպքում՝
 - 6.8.1. ԱՄՆ-ի և Կանադայի բժշկական հաստատություններում ամբուլատոր (արտահիվանդանոցային) պայմաններում կատարված հետազոտությունները ենթակա են հատուցման առավելագույնը 1000 (մեկ հազար) եվրոյին համարժեք ՀՀ դրամի չափով, եթե այդ հետազոտությունների արդյունքում պարզ է դառնում ապահովագրական պատահարի առկայության փաստը:
 - 6.8.2. պատահարը ենթակա է հատուցման հիվանդանոցում անցկացրած յուրաքանչյուր օրվա համար ոչ ավել, քան 500 (հինգ հարյուր) եվրոյին համարժեք ՀՀ դրամի չափով, բայց ոչ ավել, քան 3000 (երեք հազար) եվրոյին համարժեք ՀՀ դրամի չափով յուրաքանչյուր դեպքի համար:



ԲԱԺԻՆ 7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԸ, ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ԶՎՃԱՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

- 7.1. Ապահովագրավճարի վճարման կարգը և ձևը որոշվում են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ և սահմանվում են Պայմանագրով:
- 7.2. Ապահովագրավճարը հաշվարկվում է Ապահովագրողի կողմից Պայմանագրի ողջ ժամկետի համար Ապահովագրական սակագնի հիման վրա, որը ձևավորվում է Ապահովադրի կողմից ընտրված ծածկույթից, Ապահովագրության տարածքից, Չհատուցվող գումարի տեսակից ու մեծությունից, Պայմանագրի գործողության ժամկետից և ապահովագրական ռիսկի վրա ազդող այլ գործոններից:
- 7.3. Ապահովագրավճարն Ապահովադրի կողմից վճարվում է միանվագ՝ Պայմանագրի կնքման պահին, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- 7.4. Ապահովագրավճարն Ապահովադրի կողմից կարող է վճարվել կանխիկ եղանակով Ապահովագրողի դրամարկղ կամ ապահովագրական միջնորդին (գործակալին կամ բրոքերին) կամ փոխանցվել Ապահովագրողի համապատասխան բանկային հաշվին:
- 7.5. Եթե Ապահովագրական պատահարը տեղի է ունեցել մինչև հերթական Ապահովագրավճարի վճարումը, որը կետանցվել է, ապա Ապահովագրողն իրավունք ունի վճարման ենթակա Ապահովագրական հատուցման չափը որոշելիս հաշվանցել կետանցված Ապահովագրավճարի չափը:
- 7.6. Եթե Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 3-օրյա ժամկետում Ապահովադիրը չի վճարում Ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու Պայմանագիրը, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- 7.7. *Ապահովագրողն իրավունք ունի հրաժարվել ապահովագրական հատուցում իրականացնելուց, եթե Ապահովադիրն Ապահովագրական պատահար տեղի ունենալու պահի դրությամբ Ապահովագրավճարի գծով Ապահովագրողի նկատմամբ ունի ժամկետանց պարտավորություններ:* Սույն կետով սահմանված Ապահովագրողի իրավունքը գործում է մինչև Ապահովադրի կողմից Ապահովագրավճարի գծով ունեցած պարտավորության մարման օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրվա ժամը 00:00-ն:

ԲԱԺԻՆ 8. ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ, ԺԱՄԿԵՏԸ, ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ

- 8.1. Պայմանագիրն Ապահովագրողի և Ապահովադրի միջև կնքված փաստաթուղթ է, ըստ որի Ապահովագրողն Ապահովագրավճարի դիմաց պարտավորվում է Պայմանագրով և սույն Պայմաններով սահմանված կարգով Ապահովադրին (Ապահովագրված անձին) տրամադրել ապահովագրական հատուցում:
- 8.2. Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ Ապահովադրի կողմից բանավոր կամ գրավոր դիմումի հիման վրա:
- 8.3. Սույն Պայմանները կցվում են Պայմանագրին հանդիսանալով դրա անբաժանելի մասը, և պարտադիր են Կողմերի համար:
- 8.4. Պայմանագիրը կնքելու համար Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրից պահանջել.
 - 8.4.1. ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի բնօրինակը կամ պատշաճ վավերացված պատճենը, իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման վկայականի և դրա ներդիրների բնօրինակները կամ պատշաճ վավերացված պատճենները,
 - 8.4.2. Ապահովագրված անձի անձնագրի բնօրինակը կամ պատշաճ վավերացված պատճենը,
 - 8.4.3. տրամադրել գրավոր տեղեկություն, որն ուղղակի կամ անուղղակի կարող է որոշակի ազդեցություն ունենալ Ապահովագրողի կողմից Ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականության և դրա հետևանքով հնարավոր վնասների չափերի կանխորոշման վրա, ինչպես նաև այլ փաստաթղթեր և տեղեկատվություն, որոնք անհրաժեշտ են ապահովագրական ռիսկի ճշգրիտ գնահատման, ինչպես նաև Պայմանագրի կնքման համար:
- 8.5. Պայմանագրի գործողության ժամկետը սահմանվում է Պայմանագրով՝ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:
- 8.6. Պայմանագիրը կնքվում է նվազագույնը 1 (մեկ) օր, իսկ առավելագույնը 1 (մեկ) տարի ժամկետով:
- 8.7. Պայմանագիրը չի գործում Հայաստանի Հանրապետությունում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, այն տարածքներում, որտեղ Ապահովագրված անձը հանդիսանում է քաղաքացի



կամ ռեզիդենտ, այն երկրներում, որտեղ իրականացվում են ռազմական գործողություններ, կամ որոնք գտնվում են պատերազմական իրավիճակում, այդ թվում՝ քաղաքացիական պատերազմի, անկախ այն հանգամանքից, թե այդ պատերազմը եղել է հայտարարված, թե ոչ, ինչպես նաև այն երկրներում, որոնք համարվում են համաճարակային տարածքներ կամ որոնց նկատմամբ ՄԱԿ-ի կողմից կիրառվում են տնտեսական և (կամ) ռազմական պատժամիջոցներ:

- 8.8. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Պայմանագիրը երկկողմանի ստորագրելու և կնքելու պահից, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:
- 8.9. Պայմանագրի և սույն Պայմանների միջև անհամապատասխանությունների դեպքում գերակա է Պայմանագիրը, իսկ սույն Պայմանների և նրա թարգմանությունների տարբերակների դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն տարբերակին:

ԲԱԺԻՆ 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 9.1. Ապահովադիրը և (կամ) Ապահովագրված անձն իրավունք ունի՝
 - 9.1.1. Ապահովագրողից պահանջել պետական գրանցումը և գործունեության թույլտվությունը հավաստող փաստաթղթերը (պետական գրանցման վկայական, լիցենզիա),
 - 9.1.2. Ապահովագրողի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական միջնորդի (բրոքերի կամ գործակալի) միջոցով,
 - 9.1.3. Պայմանագրով նախատեսված դեպքերում ստանալ ապահովագրական հատուցում,
 - 9.1.4. Պայմանագիրը կորցնելու դեպքում գրավոր դիմումի հիման վրա ստանալ դրա կրկնօրինակը,
 - 9.1.5. Պայմաններով սահմանված կարգով վաղաժամկետ լուծել Պայմանագիրը:
- 9.2. Ապահովադիրը և (կամ) Ապահովագրված անձը պարտավոր է՝
 - 9.2.1. Ապահովագրողին հաղորդել ապահովագրական ռիսկի աստիճանը որոշող հավաստի և ճշգրիտ իրեն հայտնի բոլոր տեղեկությունները,
 - 9.2.2. Ապահովագրողին հայտնել նույն ռիսկերն այլ ապահովագրության պայմանագրերով/վկայագրերով ապահովագրված լինելու մասին,
 - 9.2.3. Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում վճարել Ապահովագրավճարը,
 - 9.2.4. Պատահար տեղի ունենալու դեպքում անհապաղ պատահարի մասին հայտնել Ապահովագրողին կամ Աջակցող ընկերությանը,
 - 9.2.5. Ապահովագրական պատահար տեղի ունենալու ժամանակ իրականացնել միջոցառումներ՝ վնասի մեծացման չափը կանխելու նպատակով,
 - 9.2.6. Եթե Ապահովագրական պատահարի հետևանքով Ապահովագրված անձի մոտ անհրաժեշտություն է առաջացել իր մոտ առկա ավիատումսը հետ վերադարձնելու կամ մեկ այլով փոխարինելու, այդ գործընթացը իրականացնել առաջին իսկ հնարավորության դեպքում,
 - 9.2.7. Պայմանների մասին տեղեկացնել Ապահովագրված անձին,
 - 9.2.8. Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովագրողին անհապաղ տեղեկացնել այնպիսի հանգամանքների մասին, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կարող են ազդել ապահովագրական ռիսկի գնահատման վրա,
 - 9.2.9. ապահովել Աջակցող ընկերությանը և (կամ) Ապահովագրողին իրեն հայտնի այն տեղեկատվությամբ, որն անհրաժեշտ է Ապահովագրական պատահարի հետ կապված հանգամանքները պարզելու համար, ինչպես նաև չխոչընդոտել վերջիններիս՝ նման տեղեկություններ ձեռք բերելու և դրանց ծանոթանալու գործընթացին:
- 9.3. Ապահովագրողն իրավունք ունի՝
 - 9.3.1. ստուգել Ապահովադրի կողմից ներկայացված տեղեկությունները, ինչպես նաև հետևել և պահանջել Ապահովադրի կողմից Պայմանագրի պահանջների և պայմանների կատարումը,
 - 9.3.2. Պայմանագիր կնքելուց առաջ պահանջել համապատասխան փաստաթղթեր,
 - 9.3.3. Ապահովադրի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական միջնորդի (բրոքերի կամ գործակալի) միջոցով,
 - 9.3.4. հետաքննել Ապահովագրական պատահարի հանգամանքները,



- 9.3.5. իրավասու պետական մարմիններից կամ պատահարի առաջացման հանգամանքներին ծանոթ այլ անձանցից ինքնուրույն պարզել պատահարի առաջացման պատճառները և հանգամանքները, ինչպես նաև հավաքագրել Ապահովագրական պատահարի հետ կապված տվյալներ,
 - 9.3.6. ապահովագրական հատուցման կամ մասնակի հատուցման վերաբերյալ որոշում կայացնելու համար կասեցնել կամ երկարաձգել ապահովագրական հատուցման գործընթացը, եթե ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց պատճառով Ապահովագրողն անհրաժեշտ է համարում ստանալ հավելյալ տեղեկություն Ապահովագրական պատահարի վերաբերյալ՝ դրա մասին գրավոր ծանուցելով Ապահովադիրին (Ապահովագրված անձին),
 - 9.3.7. ապահովագրական հատուցման ենթակա գումարը վճարելիս այն հաշվանցել Պայմանագրի գծով կետանցված Ապահովագրավճարի հետ,
 - 9.3.8. պահանջել Պայմանագրով սահմանված Ապահովագրավճարի չափի փոփոխություն, Պայմանագրի դադարեցում կամ Պայմանագրի դրույթների փոփոխություն, եթե Պայմանագրի գործողության ընթացքում տեղի է ունեցել ապահովագրական ռիսկի մեծացում,
 - 9.3.9. *մերժել ապահովագրական հատուցման իրականացումը, եթե Ապահովադիրը (Ապահովագրված անձը) չի կատարել կամ ոչ պատշաճ է կատարել սույն Պայմաններով սահմանված իր պարտավորությունները, ինչպես նաև եթե Ապահովագրված անձը Պայմանագրի կնքման պահին գտնվել է Հայաստանի Հանրապետության կամ Արցախի Հանրապետության տարածքներից դուրս (բացառությամբ Պայմանագրի ավարտով պայմանավորված դրա վերականգնման դեպքի) և հետագայում ներկայացրել է հայտ վերջինիս գծով*
 - 9.3.10. *մերժել ապահովագրական հատուցման վճարումը ՀՀ օրենսդրությամբ, Պայմանագրով կամ Պայմաններով սահմանված կարգով:*
- 9.4. Ապահովագրողը պարտավոր է՝
- 9.4.1. Ապահովադիրի պահանջով ցույց տալ պետական գրանցումը և ապահովագրությամբ զբաղվելու թույլտվությունը (լիցենզիան) հավաստող փաստաթղթերը,
 - 9.4.2. Ապահովադիրին ծանոթացնել Պայմանների հետ և տրամադրել դրա օրինակը,
 - 9.4.3. Ապահովադիրին տրամադրել Պայմանագրի օրինակը և երկրորդ օրինակը,
 - 9.4.4. Ապահովադիրին տրամադրել Աջակցող ընկերության տվյալները և հեռախոսահամարը,
 - 9.4.5. Պայմանագրով և Պայմաններով սահմանված դեպքերում, կարգով և ժամկետում իրականացնել ապահովագրական հատուցում:
- 9.5. Կողմերը և Ապահովագրված անձը պարտավոր են չհրապարակել, չբացահայտել և (կամ) երրորդ անձին չտրամադրել իրենց հայտնի դարձած բժշկական, ֆինանսական և ապահովագրական գաղտնիք հանդիսացող և (կամ) պարունակող ցանկացած տեսակի տեղեկություն՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի, և իրենց հայտնի դարձած տեղեկությունը չօգտագործել ի օգուտ սեփական և (կամ) երրորդ անձանց շահերին, ինչպես նաև միմյանց տնտեսական դիրքին վնաս հասցնելու համար:
- 9.6. Ապահովադիրը (Ապահովագրված անձը) ու Ապահովագրողն ունեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված նաև այլ իրավունքներ ու պարտականություններ:

ԲԱԺԻՆ 10. ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

- 10.1. Պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը և (կամ) Ապահովագրված անձը պարտավոր են.
- 10.1.1. Ապահովագրական պատահար տեղի ունենալուց հետո անհապաղ դրա մասին հայտնել Աջակցող ընկերությանը կամ Ապահովագրողին և հետևել վերջինիս ցուցումներին: Սույն պարտականությունը չկատարելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի չվճարել ապահովագրական հատուցում, եթե չապացուցվի, որ նա ժամանակին իմացել է Ապահովագրական պատահարի վրա հասնելու մասին կամ որ այդ մասին Ապահովագրողի մոտ տեղեկությունների բացակայությունը չէր կարող ազդել ապահովագրական հատուցում վճարելու նրա պարտականության վրա,
 - 10.1.2. Ապահովագրական պատահարի մասին անհապաղ (առաջին իսկ հնարավորության դեպքում) հայտնել համապատասխան իրավասու մարմիններին և ստանալ պատահարը տեղի ունենալու հանգամանքը հավաստող, ինչպես նաև պատահարի հետ կապված այլ փաստաթղթեր,



բացառությամբ այն դեպքի, երբ Ապահովագրողը կամ Աջակցող ընկերությունն Ապահովադիրին (Ապահովագրված անձին) գրավոր ազատել է սույն ենթակետում նշված պարտականությունները կատարելուց,

- 10.1.3. Ապահովագրական պատահարի ժամանակ, Աջակցող ընկերության հետ կապ հաստատելու անհնարինության դեպքում, դա անել առաջին իսկ ընձեռված հնարավորության դեպքում և ներկայացնել Պայմանագիրը,
- 10.1.4. *սույն Պայմանների 10.1.1 - 10.1.3 կետերը խախտելու դեպքում Ապահովագրված անձի կրած ծախսերը հատուցման ենթակա չեն,*
- 10.1.5. ՀՀ, ԼՂՀ կամ մշտական բնակության վայր վերադառնալուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողին գրավոր տեղեկացնել Ապահովագրական պատահարի մասին և դրանից հետո առավելագույնը 3 (երեք) ամսվա ընթացքում ներկայացնել սույն Պայմաններով սահմանված փաստաթղթերը՝ ներկայացված ապահովագրական պահանջը կարգավորելու նպատակով, եթե ծախսերն իրականացվել են Ապահովագրված անձի կողմից ինքնուրույն: *Սահմանված ժամկետում Ապահովագրողին գրավոր չտեղեկացնելու կամ անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի մերժելու Ապահովագրական հատուցման իրականացումը, բացառությամբ այն դեպքի, երբ Ապահովադիրը (Ապահովագրված անձը) ապացուցում է դրա անհնարինությունը,*
- 10.1.6. Ապահովագրական պատահարի առաջացման համար երրորդ կողմից պատճառված վնասի (մի մասը կամ ամբողջությամբ) հատուցման դեպքում անմիջապես տեղեկացնել Ապահովագրողին, որի դեպքում Ապահովագրողին են վերադարձվում համապատասխան չափով վճարված ապահովագրական հատուցումը, իսկ հատուցումը վճարված չլինելու դեպքում այդքան մասով վճարում չի կատարվում,
- 10.1.7. Ապահովագրական պատահարի հետ կապված գործընթացներում այլ կողմերի հետ հարաբերություններում ապահովել իր իրավունքների և շահերի պատշաճ պաշտպանությունը:
- 10.2. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովագրողը պարտավոր է՝
 - 10.2.1. Ապահովագրական պատահարի մասին տեղեկացվելուց հետո Ապահովագրողը կամ Աջակցող ընկերությունը կազմակերպում են Ապահովագրված անձին անհրաժեշտ և Պայմանագրով նախատեսված բժշկական, բժշկա-տրանսպորտային և այլ ծառայությունների տրամադրումը, իսկ Ապահովագրողը սույն Պայմաններով սահմանված կարգով Աջակցող ընկերությանը վճարում է Ապահովագրված անձին մատուցված ծառայությունների համար: Աջակցության Կենտրոն կատարված առաջին զանգի հետ կապված ծախսերը Ապահովագրված անձին կհատուցվեն համապատասխան փաստաթղթերի բնօրինակների ներկայացման դեպքում:
 - 10.2.2. Ապահովադրի (Ապահովագրված անձի) պահանջով տրամադրել խորհրդատվություն հետագա իրականացվելիք գործողությունների վերաբերյալ,
 - 10.2.3. Ապահովադրից (Ապահովագրված անձից) ապահովագրական հատուցման դիմում ստանալուց հետո վերջինիս տեղեկացնել բացակայող և ապահովագրական պահանջի կարգավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի մասին,
 - 10.2.4. իրականացնել ապահովագրական հատուցում Պայմաններով սահմանված կարգով և ժամկետում:

ԲԱԺԻՆ 11. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՁԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

- 11.1. Ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովագրողին պետք է ներկայացվեն հետևյալ փաստաթղթերը՝
 - 11.1.1. Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից դիմում՝ հատուցում ստանալու վերաբերյալ,
 - 11.1.2. Ապահովագրված անձի օրգանիզմում ալկոհոլի, թմրադեղերի և հոգեմետ այլ նյութերի առկայության մասին փաստաթուղթը (եթե Ապահովագրողը գրավոր կերպով Ապահովադիրին (Ապահովագրված անձին) չի ազատել նման պարտականությունից),
 - 11.1.3. Պայմանագրի բնօրինակը (Ապահովագրողի պահանջով),
 - 11.1.4. Ֆիզիկական անձ Ապահովադրի դեպքում՝ վերջինիս անձնագիրը (Ապահովագրողի պահանջով),



- 11.1.5. իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման վկայականը և դրա ներդիրները (Ապահովագրողի պահանջով),
- 11.1.6. Ապահովագրված անձի անձնագիրը,
- 11.1.7. Ապահովագրական պատահարի վերաբերյալ իրավասու մարմինների կողմից տրված և հաստատված համապատասխան փաստաթղթերը (Ապահովագրողի պահանջով),
- 11.1.8. բժշկի (բժշկական հաստատության) կողմից նշանակված դեղորայքի ցանկն իր գներով, առողջական վիճակի մասին հաստատված տեղեկանքը, նշանակված ցուցումները, ինչպես նաև հաստատված փաստաթուղթ, որը կհավաստի Ապահովագրված անձի կողմից տվյալ Ապահովագրական պատահարի գծով բժշկին (բժշկական հաստատությանը) դիմելը, դիմելու ամսաթիվը, մատուցված ծառայությունները, բուժման տևողությունը (եթե Ապահովագրողը գրավոր կերպով Ապահովադիրին (Ապահովագրված անձին) չի ազատել նման պարտականությունից),
- 11.1.9. կատարված ծախսերը հիմնավորող այլ փաստաթղթեր,
- 11.1.10. Ապահովագրողի պահանջով ներկայացված փաստաթղթերի հայերեն թարգմանությունները՝ նոտարի վավերացմամբ:
- 11.2. Ապահովագրված անձի մահվան դեպքում, եթե աճյունի տեղափոխումը իրականացվել է ոչ Ապահովագրողի կամ Աջակցող ընկերության կողմից, ապա այդ տեղափոխման ծախսերի դիմաց հատուցում ստանալու համար վերջինիս ժառանգներն Ապահովագրողին պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝
- 11.2.1. Ապահովագրված անձի մահվան վկայականի բնօրինակը կամ նոտարական գրասենյակի կողմից հաստատված պատճենը,
- 11.2.2. Ապահովագրված անձի մահվան պատճառների վերաբերյալ բժշկական տեղեկանքը (վկայականը),
- 11.2.3. համապատասխան իրավասու մարմնի կողմից հաստատված ժառանգության իրավունքը հավաստող փաստաթուղթը կամ դրա պատճենը:
- 11.3. Բոլոր ներկայացվող փաստաթղթերը պետք է լինեն կնիքով կամ դրոշմակնիքով կամ ֆիրմային ձևաթղթի վրա (հակառակ դեպքում բժշկական ծախսերի ժամանակ պետք է ներկայացվեն բուժող բժշկի անունը, ազգանունը և հեռախոսահամարը և (կամ) էլեկտրոնային հասցեն, ինչպես նաև այն բժշկական հաստատության հասցեն և հեռախոսահամարը և (կամ) էլեկտրոնային հասցեն, որտեղ Ապահովագրված անձը ստացել է Ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած վնասվածքի և (կամ) հիվանդության համար բուժումը):
- 11.4. Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողի պահանջով տրամադրել նաև այնպիսի փաստաթղթեր և տեղեկատվություն, որոնք ուղղակի կապ ունեն տեղի ունեցած պատահարի հետ կամ կարևոր են վնասի պատճառների և (կամ) չափի հիմնավորման համար:
- 11.5. Ապահովադիրը (Ապահովագրված անձը) կրում է իր կողմից Ապահովագրողին ներկայացված փաստաթղթերի (ներառյալ՝ պատճենների) իսկության, հավաստիության և ոչ կեղծ լինելու բոլոր իրավական հետևանքների ռիսկերը:
- 11.6. Եթե հատուցման իրականացման համար անհրաժեշտ են լրացուցիչ տեղեկություններ, ապա Ապահովագրողն իրավունք ունի Ապահովագրված անձից պահանջել լրացուցիչ տեղեկատվություն:
- 11.7. *Սույն Պայմաններով սահմանված ժամկետում Ապահովադիրի (Ապահովագրված անձի) կողմից Պայմաններով անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու կամ սահմանված 3 (երեք) ամիս ժամկետը երկարաձգելու մասին գրավոր որևէ միջնորդություն չներկայացնելու դեպքում Ապահովագրողը, Պայմանների համաձայն, Ապահովադիրի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով կարող է մերժել ապահովագրական հատուցման վճարումը՝ սույն կետում սահմանված ժամկետը լրանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:*
- 11.8. Այն դեպքում, երբ Ապահովադիրը (Ապահովագրված անձը) գրավոր միջնորդություն է ներկայացնում փաստաթղթերի ներկայացման խոչընդոտների կամ այլ պատճառաբանությամբ սահմանված ժամկետը երկարացնելու մասին, Ապահովագրողը, ելնելով տվյալ գործի հանգամանքներից, կարող է այդ ժամկետը երկարաձգել ևս 6 (վեց) ամիս ժամկետով կամ մինչև Ապահովագրված անձի երկարատև բուժման ավարտը:



- 11.9. Ապահովագրողն Ապահովագրական պատահարին առնչվող և սույն Պայմաններով սահմանված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում կայացնում է ապահովագրական հատուցում տրամադրելու կամ մերժելու վերաբերյալ որոշում:
- 11.10. Ապահովագրողը Ապահովադրի (Ապահովագրված անձի) պահանջով ապահովագրական հատուցում տրամադրելու վերաբերյալ եզրակացությունը (որոշումը) հաստատելուց հետո առավելագույնը 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում այն առձեռն կամ փոստային ծառայության միջոցով տրամադրում է Ապահովադրին (Ապահովագրված անձին):
- 11.11. Ապահովագրական հատուցման մերժման դեպքում Ապահովագրողը կայացնում է պատճառաբանված որոշում, որը 5 (հինգ) օրվա ընթացքում պատվիրված նամակով ուղարկվում է Ապահովադրին (Ապահովագրված անձին)՝ նրա մշտական բնակության կամ գործունեության հասցեով:
- 11.12. Ապահովագրական հատուցում իրականացնելու մասին որոշում կայացնելու օրվանից հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողը վճարում է ապահովագրական հատուցում:
- 11.13. *Ապահովագրողն իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցումը կամ հետ պահանջել այն, եթե պարզվի, որ Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովադրի կողմից Ապահովագրողին տրամադրվել են ապահովագրական ռիսկի գնահատման վրա ազդող կեղծ տեղեկություններ կամ այն դեպքերում, երբ Ապահովագրված անձի (Ապահովադրի) կողմից իրականացվել են միտումնավոր գործողություններ, որոնք ուղղված են եղել կամ նպաստել են Ապահովագրական պատահարի տեղի ունենալուն:*
- 11.14. Ապահովադիրը պատահարի հետ կապված յուրաքանչյուր նամակի, պահանջի, հայցի, դատաքննության, հետաքննության կամ ցանկացած այլ գործընթացի վերաբերյալ տեղեկությունները կամ փաստաթղթերը պետք է անմիջապես ներկայացնի Ապահովագրողին:
- 11.15. Եթե Պայմանների համաձայն ապահովագրական հատուցման պահանջի ժամանակ գոյություն ունի այլ ապահովագրության պայմանագիր/վկայագիր, որով հատուցվում է նույն պատահարի հետևանքով առաջացած վնասը, ապա Ապահովագրողը հատուցում է իրականացնում իր համամասնական բաժնի չափով:

ԲԱԺԻՆ 12. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ

- 12.1. Պայմանագիրը վաղաժամկետ դադարում է.
 - 12.1.1. եթե վերացել է Ապահովագրական պատահարի վրա հասնելու հավանականությունը, և ապահովագրական ռիսկի գոյությունը դադարել է Ապահովագրական պատահարից տարբեր այլ հանգամանքների բերումով,
 - 12.1.2. Կողմերի փոխհամաձայնեցմամբ,
 - 12.1.3. եթե Ապահովագրողի կողմից կատարվել են Պայմանագրով նախատեսված բոլոր պարտավորությունները,
 - 12.1.4. եթե Ապահովագրված անձը մահացել է (եթե դեպքը որակվել է որպես Ապահովագրական պատահար, կատարվում է ապահովագրական հատուցում),
 - 12.1.5. ՀՀ օրենսդրությամբ, Պայմաններով կամ Պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:
- 12.2. Պայմանագրի գործողության մեջ մտնելուց հետո Ապահովադրի կողմից Պայմանագրից հրաժարվելու դեպքում Ապահովագրողին վճարված ապահովագրավճարները վերադարձման ենթակա չեն:
- 12.3. Ապահովադրի կողմից մինչև ապահովագրության ժամկետի գործողության մեջ մտնելը Պայմանագրից հրաժարվելու դեպքում Ապահովագրողին վճարված ապահովագրավճարները ենթակա են վերադարձման վճարված ապահովագրավճարի 60 (վաթսուն) %-ի չափով:
- 12.4. Ապահովադրի ցանկությամբ Պայմանագրի դադարեցման դեպքում Ապահովադիրը (Ապահովագրված անձը) պարտավոր է Ապահովագրողին վերադարձնել Պայմանագրի բնօրինակը և երկրորդ օրինակը, հակառակ դեպքում Ապահովագրողին վճարված Ապահովագրավճարները վերադարձման ենթակա չեն:
- 12.5. Պայմանագիրն առոչինչ կամ անվավեր է համարվում ՀՀ օրենսդրությամբ, Պայմաններով կամ Պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով:



ԲԱԺԻՆ 13. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ)

- 13.1. Սույն Պայմաններով և Պայմանագրով սահմանված պարտավորությունները մասնակի կամ լրիվ չկատարելու դեպքում Պայմանագրի կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե այն հետևանք է անհաղթահարելի ուժի, մասնավորապես՝ ջրհեղեղի, պայթյունի, հրդեհի, երկրաշարժի, այլ տարերային աղետների, պատերազմի, ռազմական գործողությունների, զինված հարձակման, զանգվածային անկարգությունների, ժողովրդական հուզումների, սահաբեկչության, գործադուլների, արտակարգ դրության, տնտեսական շրջափակման, հաղորդակցման միջոցների աշխատանքի դադարեցման, կառավարության կողմից սահմանված այլ սահմանափակումների և արգելանքների կամ նման այլ իրադարձությունների:
- 13.2. Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը կամ դրա հետևանքները երկարաձգվում են 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղեկացնելով Պայմանագրի մյուս կողմին:
- 13.3. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը սույն Պայմաններով և Պայմանագրով սահմանված պարտականությունների իրականացման վրա պարտավոր է ապացուցել Պայմանագրի այն կողմը, որի պարտականությունների իրականացմանն է խոչընդոտում նման ազդեցությունը:

ԲԱԺԻՆ 14. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

- 14.1. Պայմանագրի գործողության ընթացքում առաջացող բոլոր վեճերը լուծվում են Պայմանագրի կողմերի միջև անմիջական բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը կարող են լուծվել ՀՀ-ում գործող Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու միջոցով կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համաձայն:
- 14.2. Վեճերի առաջացման դեպքում Պայմաններով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: